



Քաղաքակիրթ լինելու առաջին ասպացույցը մաքուր միջավայրն է



Մեկնարկեց ՀՀ բնապահպանության նախարարության և WWF-Հայաստանի համատեղ նախաձեռնությունը: Հայաստանը, լինելով քաղաքակրթության օրրաններից մեկը, գեղատեսիլ լանդշաֆտներով, ինքնատիպ բուսական ու կենդանական աշխարհով, բնական հուշարձաններով և պատմական հնագույն վայրերով հարուստ երկիր է: Ամբողջ երկրով մեկ սփռված են պատմական հուշարձանների գլուխգործոցներ: Առկա են ավելի քան 40,000 պատմական վայրեր, որոնք իրենց գրավչու-

«Մաքուր Հայաստան - Մաքուր Բնություն»

թյամբ զբոսաշրջության զարգացման համար շարժիչ ուժն են հանդիսանում:

Ցավոք ներկայումս, այս բոլոր վայրերը աղտոտված են կենցաղային աղբի կուտակումներով, որը զգալիորեն նվազեցնում է զբոսաշրջության համար կարևոր պատմամշակութային հուշարձանների գրավչությունը և բացասական մեծ ազդեցություն է թողնում բնական էկոհամակարգերի վրա: Թափոններն իրենց բաղադրությամբ և տեսակով շատ բազմազան են: Դրանք կարող են լինել փայտյա, մետաղյա, ապակյա, ռետինե իրեր, թուղթ, սննդի մնացորդներ, նաև պլաստիկ իրեր՝ միանվագ օգտագործման բաժակներ, շշեր, խաղալիքներ, պոլիէթիլենային տոպրակներ, լինոլեումի կտորներ, շինարարական նյութեր և այլն: Աղտոտվածության պատճառները բազմաթիվ են՝ հասարակության վերաբերմունք /համապատասխան մշակույթի ձևավորում/, աճող զբոսաշրջիկների թիվ, աղբի հավաքագրման թերի համակարգ, բացակայող աղբարկղեր և այլն: Անհրաժեշտ է, որ մարդիկ գիտակցեն՝ մեր երկրի բնությունը, տեսարժան վայրերը մեր ազգային հարստությունն են և մեր դեմքը:

• Քաղաքակիրթ լինելու առաջին ամպոստը մաքուր միջավայրն է

Սկզբը էջ 1 /

Մեր բոլորի պարտականությունն ու պատասխանատվությունն է մաքուր պահել մեր երկիրը, ինչպես մեր սեփական տունը: Այս ամենն ունի բազմաթիվ բացասական հետևանքներ՝ բնապահպանականից մինչև առողջական: Այդ իսկ պատճառով, ՀՀ ԲՆ-ն և WWF-Հայաստանը առաջնահերթ են համարում խնդրի լուծումը՝ առաջարկելով նախաձեռնել և անցկացնել աղբի մաքրման համազգային արշավ, ինչի շնորհիվ կներգրավվեն

հասարակության լայն շերտեր, մի շարք շահագրգիռ կառույցներ: Համատեղ ջանքերով կմաքուրվի Հայաստանն աղբից, կներդրվեն աղբի կառավարման համապատասխան մեխանիզմներ ու կառույցներ՝ նախագծի կայունությունն ապահովելու համար: Մեր էլեկտրոնային թերթը պարբերաբար կանդաղադառնա այս ձեռնարկի ընթացքին և ձեզ կներկայացնի նրա բոլոր ուշագրավ դրվագները:

ՀԷԿ-երի կառուցման ու շահագործման համար պետք է լինեն հստակ չափորոշիչներ



Մարտի 9-ի Կառավարության նիստում վարչապետ Կարեն Կարապետյանը կարևորել է վերականգնվող էներգետիկայի ոլորտի զարգացումը և փոքր ՀԷԿ-երի ոլորտի կարգավորման ուղղությամբ տվել է հանձնարարական: Վարչապետի խոսքով, կարևորելով շրջական միջավայրի պահպանությունը, վերականգնվող էներգետիկայի ոլորտում ներդրումների աճը՝ ՀՀ-ն քայլեր է կատարում խրախուսելու փոքր ՀԷԿ-երի շահագործումը՝ սահմանելով երկարաժամկետ և տրամաբանական վաճառքի սակագին և ներգրավվելով ցածր դրույքաչափով վարկային միջոցներ: «Սակայն օրենսդրական, տեխնիկական և ինստիտուցիոնալ անբավարար կարգավորումների պատճառով փոքր ՀԷԿ-երը ներկայումս զգալի բացասական ազդեցություն են թողնում ինչպես շրջակա միջավայրի, այնպես էլ սոցիալական և տնտեսական երկարաժամկետ զարգացումների վրա», - ասել է վարչապետ Կարեն Կարապետյանը: Խնդիրները համակարգելու համար վարչապետը հանձնարարեց ՀՀ բնապահպանության նախարարին երկամսյա ժամկետում սահմանել փոքր ՀԷԿ-երի կառուցման և շահագործման համար շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հստակ չափորոշիչներ, երկրորդ՝ վերանայել բնապահպանական թողբի վերաբերյալ ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի համապատասխան որոշումը՝ հաշվի առնելով գետերի սնուցման և սեզոնային առանձ-

նահատկությունները, և թողբի խախտման համար պատասխանատվության տեսակները: Վարչապետի հանձնարարականով համագործակցելով ՀՀ գյուղատնտեսության, էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունների հետ, էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը պետք է հստակեցնի գետերի ցանկը, որտեղ բնապահպանական, գյուղատնտեսական և այլ առանձնահատկություններից ելնելով արգելվում է ՀԷԿ-երի կառուցումը: «Համագործակցելով ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի, ինչպես նաև Քաղաքաշինության պետական կոմիտեի և Ստանդարտների ազգային ինստիտուտի հետ, պետք է մշակել ձկնուղիների կառուցման և աստիճանների բարձրության նորմեր: Հաշվի առնելով նաև միջազգային փորձը, անհրաժեշտ է ուսումնասիրել ՀԷԿ-երի կողմից օգտագործվող ջրային ռեսուրսների համար բնօգտագործման վճարների ներդրման և նպատակային օգտագործման հնարավորությունները», - ասել է վարչապետը:

Վարչապետը նաև ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին հանձնարարեց երկամսյա ժամկետում համագործակցելով գյուղատնտեսության, բնապահպանության նախարարությունների, ինչպես նաև Պետական եկամուտների կոմիտեի և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ՝ մշակել լրացուցիչ խթանման գործիքներ ոռոգման համակարգերի և խմելու ջրի ջրատարների վրա ՀԷԿ-երի կառուցման համար: Երկրորդ՝ ուսումնասիրել ՀԷԿ-երի կողմից արտադրված էլեկտրաէներգիայի մատակարարման ժամկետները, ծավալները և ջրօգտագործման թույլտվությունների ժամկետները, վեր հանել առկա խնդիրները: Նախարարությունը պետք է նաև ուսումնասիրի գործող և կառուցվող բոլոր փոքր ՀԷԿ-երի ջրառի կետերում շահագործողի միջոցներով, հնարավորության դեպքում նաև դրամաշնորհների ներգրավման ժամանակի իրական ռեժիմում տեղեկատվության փոխանցման համակարգի ներդրման հնարավորությունները:

ԵՄ «Զրային նախա- ծեռնություն+» ծրագիրը արագ արձագանքում է փո- փոխություններին

«Զրային նախա-ծեռնություն+» ծրագրի ղեկավար Մայքլ Սուտերին և տեխնիկական խորհրդատու Թիմոթի Թրոնթերին: Եվրոպական Միության քառամյա այս ծրագրով ակնկալվում է ջրային ռեսուրսների մոնիթորինգի բարելավման տեխնիկական հագեցվածության ապահովում, աջակցություն երկրի հիմնական գետավազանների ջրային հաշվեկշիռների ճշգրտման և ջրավազանային կառավարման պլանների իրականացման գործընթացին: Աշխատանքային ծրագրի մեկնարկը կտրվի սույն թվականի մայիսի 16-ին, Բրյուսելում, ինչն առաջին տարածաշրջանային համոթիպումն է լինելու: Հանդիպմանը հայկական կողմից կմասնակցի ՀՀ ԲՆ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության պետ, ծրագրի ազգային համակարգող Վ. Դավթյանը: Ողջունելով հյուրերին՝ նախարարի առաջին տեղակալը նշել է, որ ծրագրի նախամեկնարկային փուլում արդեն էական խորհրդատվական աջակցություն է ցուցաբերվել ՀՀ բնապահպանության նախարարությանը: Միմյուր Պապյանը կարևորել է այն հանգամանքը, որ ծրագիրը շատ արագ է արձագանքում փոփոխություններին, առաջարկվող նոր պահանջներին և դրանց հիման վրա վերանայում մոդելային պլանի բովանդակությունը: Մայքլ Սուտերը շնորհակալություն է հայտնել ՀՀ բնապահ-



պանության նախարարության ներկայացուցիչներին արդյունավետ համագործակցության համար և ներկայացրել ըստ ժամանակացույցի մեկնարկային հաշվետվության նախապատրաստման աշխատանքների ընթացքը: Ծրագրի ղեկավարը անդրադարձել է ԵՄ-Հայաստան «Համապարփակ և ընդլայնված գործընկերության» ստորագրվելիք համաձայնագրի բնապահպանական բաղադրիչին և պատրաստակամություն հայտնել աջակցել դրա դրույթների կատարմանը: Տեղեկացնելով, որ ԵՄ-Հայաստան «Համապարփակ և ընդլայնված գործընկերության» նոր համաձայնագրի բնապահպանական դրույթները հիմնականում չեն տարբերվում նախորդից՝ Ս. Պապյանը հավելել է, որ վերջին տարիներին Հայաստանը ուղրտում առաջնորդվել է Եվրամիության դիրեկտիվներով: Նախարարի առաջին տեղակալը նկատել է, որ ԵՄ «Զրային նախա-ծեռնություն+» ծրագրի նպատակներն ուղղակիորեն առնչվում են Համաձայնագրի բնապահպանական որոշ դրույթներին՝ ակնկալելով դրանց կատարման ուղղությամբ արդյունավետ համագործակցություն և աջակցություն: Մայքլ Սուտերը նշել է, որ ծրագրի շրջանակներում նախատեսվող ջրավազանային կառավարման և մոնիթորինգի իրականացման բաղադրիչներում հաշվի են առնվել և հետազայում էլ անպայման կդիտարկվեն հայկական կողմի բոլոր առաջարկները:

Լինելու է վստահություն եւ անվերապահ աջակցություն

«Զրային նախա-ծեռնություն+» ծրագրի ղեկավար Մայքլ Սուտերը և տեխնիկական խորհրդատու Թիմոթի Թրոնթերին: Եվրոպական Միության քառամյա այս ծրագրով ակնկալվում է ջրային ռեսուրսների մոնիթորինգի բարելավման տեխնիկական հագեցվածության ապահովում, աջակցություն երկրի հիմնական գետավազանների ջրային հաշվեկշիռների ճշգրտման և ջրավազանային կառավարման պլանների իրականացման գործընթացին: Աշխատանքային ծրագրի մեկնարկը կտրվի սույն թվականի մայիսի 16-ին, Բրյուսելում, ինչն առաջին տարածաշրջանային համոթիպումն է լինելու: Հանդիպմանը հայկական կողմից կմասնակցի ՀՀ ԲՆ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության պետ, ծրագրի ազգային համակարգող Վ. Դավթյանը: Ողջունելով հյուրերին՝ նախարարի առաջին տեղակալը նշել է, որ ծրագրի նախամեկնարկային փուլում արդեն էական խորհրդատվական աջակցություն է ցուցաբերվել ՀՀ բնապահպանության նախարարությանը: Միմյուր Պապյանը կարևորել է այն հանգամանքը, որ ծրագիրը շատ արագ է արձագանքում փոփոխություններին, առաջարկվող նոր պահանջներին և դրանց հիման վրա վերանայում մոդելային պլանի բովանդակությունը: Մայքլ Սուտերը շնորհակալություն է հայտնել ՀՀ բնապահ-



թյան անհրաժեշտությունը: Հանդիպման ընթացքում աշխատակիցների կողմից նախարարին են ներկայացվել մի շարք խնդիրներ, որոնց լուծման համար տրվել են հանձնարարականներ: Անդրադարձ է եղել բուսական և կենդանական ռեսուրսների հաշվառման, միջնաժամկետ ծախսային ծրագրում համապատասխան աշխատանքների ներառման խնդիրներին, էկոտուրիզմի զարգացման հայեցակարգին և մի շարք այլ հարցերի:

Ժամանակն է վերանայելու մոտեցումները



Քննարկվել է «Կովկասում/Հայաստանում դաշակավոր տարածքների աջակցություն» ծրագիրը

ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը հանդիպում է ունեցել ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային հանրապետության փոխդեսպան Նադիա Լիխտենբերգերի, Գերմանական զարգացման բանկի /KfW/ «Կովկասում/Հայաստանում պահպանվող տարածքների աջակցություն» ծրագրի ղեկավար Անդրեաս Վեյցելի, KfW բանկի հայաստանյան ներկայացուցիչ Ջառա Չատինյանի հետ: Հանդիպմանը մասնակցել են ՀՀ ԲՆ աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Կովկասում/ Հայաստանում պահպանվող տարածքների աջակցություն» ծրագրի ազգային համակարգող Հովհաննես Հովհաննիսյանը, Միջազգային համագործակցության վարչության պետ Արթուր Դանիելյանը: Քննարկման հիմքում «Հայաստանում պահպանվող տարածքների աջակցություն» ծրագիրն էր: Ծրագրի նպատակը բնական պաշարների և պահպանվող տարածքների արդյունավետ կառավարմանը, հարակից գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը նպաստելն է և Հարավային Կովկասում կենսաբազմազանությունը պահպանելը: Ողջունելով հյուրերին՝ նախարար Ա. Մինասյանը շնորհակալություն է հայտնել Գերմանիայի կառավարությանը և Գերմանական զարգացման բանկին՝ Հայաստանի հանրապետության բնապահպանության ոլորտում իրականացվող ծրագրերին օժանդակության և ֆինանսավորման համար: «Տարիների աշխատանքը տվել է արդյունք, այժմ նաև ժամանակն է վերանայելու մոտեցումները և համագործակցությունը նոր մակարդակի բարձրացնելու», - նշել է նախարարը: Հանդիպմանն անդրադարձ է եղել ծրագրի իրականացման ընթացքին: Կարևորվել է բնության հատուկ պահպանվող

տարածքներում արդյունավետ կառավարման մեխանիզմների ներդրումը, այս համատեքստում Արծվիկ Մինասյանը նշել է միասնական կառավարման համակարգի բացակայությունը որպես արդյունավետ կառավարմանը խոչընդոտող խնդիր: Նախարարի կողմից հատկանշվել է նաև բնության հատուկ պահպանվող տարածքների հարակից համայնքների բնակչության սոցիալական վիճակի մեղմման ուղղությամբ կայուն եկամտաստեղծ աշխատանքի հնարավորության ստեղծումը: Նախարարը հյուրերին ներկայացրել է ՀՀ բնապահպանության նախարարին կից ստեղծվող դոնորների խորհրդի կարևորությունը, ինչը կօգնի տրամադրվող օժանդակության շուրջ համատեղ որոշումների կայացմանը, դրանք դարձնելով առավել հասցեական ու նպատակային: Փոխդեսպան Նադիա Լիխտենբերգերը շնորհակալություն է հայտնել նախարարին հանդիպման համար, նշել, որ բնապահպանությունն այն ճանապարհն է, որը միասին անցնում են՝ վերափոխելով ամեն ինչ դեպի լավը: Փոխդեսպանը կարևորել է դոնորների խորհրդի կազմավորումը, ինչն իսկապես արդյունավետ կլինի ֆինանսական միջոցների համակարգման համար: Անդրեաս Վեյցելը, իր հերթին, գոհունակությամբ նշել է, որ կա բոլոր ծրագրերում օժանդակության բարելավման հնարավորություն և սպասում են նախարարությունից կոնկրետ առաջարկների՝ ընդլայնելու փոխգործակցությունը: Հանդիպման ավարտին կողմերը ևս մեկ անգամ վերահաստատել են համատեղ արդյունավետ աշխատանքին միտված հանձնառությունը և համագործակցության խորացման պատրաստակամությունը:

Հայաստանի հարավային դարպասները սպասում են իրենց խնամողին

Ինչպես և խոստացել էինք՝ «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում «Բնություն» էլեկտրոնային թերթը սկսում է տեղեկացնել մարզերում ընթացող աշխատանքների մասին:

Մեղրի համայնքի առաջնային խնդիրներից է համայնքում աղբահանության ու սանիտարական մաքրման աշխատանքների բարելավումը և այդ համակարգում 13 գյուղական բնակավայրերի ներգրավումը: Ծրագիրը նախատեսում է մաքրման աշխատանքներ սկսել Մեղրի և Ագարակ քաղաքներում, Ալվանք, Այգեձոր, Գուղեմնիս, Թխկուտ, Լեկվազ, Լիճք, Կարճեւան, Կուրիս, Նոնաձոր, Շվանիձոր, Վահրավար, Վարդանիձոր, Տաշտուն գյուղերում: Այս պահի դրությամբ՝ գոյացող աղբը թափվում է բնակելի տարածքներում, կուտակվում ձորակներում,



գետափերում, ինչը որ անհանդուրժելի է: Մինչև համայնքի խոշորացումը կանոնավոր աղբահանություն իրականացվել է միայն Ագարակ և Մեղրի քաղաքներում, իսկ գյուղերում այն չի իրականացվել բնավ: Աղբի տեղակայման համար ավագանու որոշմամբ հատկացված տարածքներ կան միայն Մեղրի և Ագարակ քաղաքներում: Հաշվի առնելով Իրանի Իսլամական Հանրապետությանը սահմանակից լինելը և զբոսոշրջիկների հոսքը, առաջնային է դառնում Մ2 միջպետական ճանապարհի և հարակից տարածքների լայնամասշտաբ աղբահանությունը: Նկատի ունենալով այս իրողությունը «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում մշակվել է «Մաքուր Մեղրի» ծրագիրը իր կոնկրետ փուլերով:

Ինչպես է արձագանքում Կոտայքի մարզի Քասախ համայնքը «Մաքուր Հայաստան-Մաքուր Բնություն» համապետական ձեռնարկին



Երկամսյա ժամկետում համայնքում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

* Համայնքի դպրոցներում իրականացնել դպրոցի և հարակից տարածքի սանմաքրման, բարեկարգման, ինչպես նաև կանաչապատման աշխատանքներ: Դպրոցների հարակից ճանապարհների, մայթերի մաքրման և բարեկարգման աշխատանքներ: Նշված աշխատանքներում ներգրավել դպրոցների աշխատակազմին, աշակերտներին և համայնքի կոմունալ բարեկարգման և սպասարկման գրասենյակի աշխատակիցներին:

* Համայնքի վարչական տարածքում գործող համայնքային

քայն և ոչ համայնքային հիմնարկներում և ձեռնարկություններում կազմակերպել և իրականացնել հիմնարկների և հարակից տարածքների սանմաքրման և բարեկարգման աշխատանքներ: Կատարվելիք աշխատանքներում ներգրավել հիմնարկ ձեռնարկությունների և համայնքի կոմունալ բարեկարգման և սպասարկման գրասենյակի աշխատակիցներին:

* Բազմաբնակարան բնակելի շենքերի հարակից տարածքներում կազմակերպել և իրականացնել տարածքների սանմաքրման և բարեկարգման աշխատանքներ: Աշխատանքներում ներգրավել բազմաբնակարան բնակելի շենքերի բնակիչներին և համայնքի կոմունալ բարեկարգման և սպասարկման գրասենյակի աշխատակիցներին:

* Համայնքի անհատական բնակելի տների թաղամասերում կազմակերպել և իրականացնել հարակից փողոցների սանմաքրման, բարեկարգման աշխատանքներ: Աշխատանքներում ներգրավել բնակիչներին և համայնքի կոմունալ բարեկարգման և սպասարկման գրասենյակի աշխատակիցներին:

* Համայնքի բնակիչների և համայնքում գործող բոլոր հիմնարկների և ձեռնարկությունների աշխատակիցների ներգրավմամբ կազմակերպել և իրականացնել համայնքի զբոսայգու տարածքի սանմաքրման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

• Ինչպես է արձագանքում Կոսայի մարզի Քասախ համայնքը «Մաֆուր Չայասան-Մաֆուր Բնություն» համադեսական ձեռնարկին

Սկիզբը էջ 51

Ինչպես նաև Երևան-Աշտարակ մայրուղու, համայնքին հարող հատվածի ճանապարհի եզրային մասի սանմաքրման աշխատանքները: Հնարավորինս բարեկարգել մայրուղուց համայնք մտնող գլխավոր ճանապարհը:



* Միջոցառումների շրջանակներում նախատեսվում է նաև իրականացնել համայնքում հուշահամալիրների և գերեզմանատների տարածքների սանմաքրման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքները: Նախատեսվում է համահայկական ծրագրից կամ Իջևանի տնկարանից ձեռք բերել 1000 հատ ծառերի ու թփերի տնկիներ կանաչապատման աշխատանքների համար: Անհրաժեշտություն կառաջանա աշխատանքներում ներգրավել քաղաքացիների սեփականություն հանդիսացող չորս միավոր տեխնիկա (տրակտորներ կցորդիչներով և բուլդո-

զեր), ինչպես նաև ձեռք բերել երկու տոննա վառելիք և այլ անհրաժեշտ պարագաներ (ավել, դույլ, փոցխ, ձեռնոցներ, բահեր, աղբի տոպրակներ և այլն):

Ծրագրով ներկայացրած միջոցառումները նախատեսվում է իրականացնել 2017 թվականի մարտ-ապրիլ ամիսներին: Ծրագրի արդյունքում համայնքի փողոցները, բակային տարածքները, դպրոցների և հիմնարկների տարածքները, համայնքի զբոսայգին կմաքրվեն ձմռան ընթացքում առաջացած աղտոտումներից: Համայնքը կդառնա ավելի մաքուր և ավելի գրավիչ՝ ինչպես բնակիչների, այնպես էլ զբոսաշրջիկների համար: Համայնքի բնակիչների մոտ համատեղ աշխատանքների ընթացքում կամրապնդվի սեփական համայնքի, հայրենիքի նկատմամբ պատասխանատվության զգացումը:

Հայոց լեռների արքա՝ կովկասյան ընձառյուծ

ցուցահանդես մետրոպոլիտենի Երիտասարդական կայարանում



Մարտի 3-ից WWF-Հայաստանը՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի Մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի աջակցությամբ, ներկայացնում է «Հայոց լեռների արքա կովկասյան ընձառյուծ» խորագրով ցուցահանդես մետրոպոլիտենի «Երիտասարդական» կայարանում:

Ցուցահանդեսը կազմակերպվել է «Հայաստանում կովկասյան ընձառյուծի պահպանության» ծրագրի 15-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում, որն իրականացվում է «Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի»՝ WWF-Հայաստանի կողմից: 2002 թ.-ից սկսած Բնության համաշխարհային հիմնադրամը Հայաստանում իրականացնում է այս կենդանատեսակի պահպանման ծրագիրը, ինչի շնորհիվ կենդանին ոչ միայն վերադարձել է Հայաստան, այլ նաև գրանցել աճի դրական միտում:

WWF-Հայաստանի «Կովկասյան ընձառյուծի պահպա-

նության» ծրագրի համակարգող Արսեն Գասպարյանը նշում է, - «Ցուցահանդեսի նպատակն է բարձրացնել մարդկանց իրազեկվածության մակարդակը մեր բնության զարդ հանդիսացող կովկասյան ընձառյուծի վերաբերյալ: Ամբողջ տարվա ընթացքում մենք մտադիր ենք իրականացնել բազմաթիվ միջոցառումներ, որոնք կշարունակեն ներկայացնել ընձառյուծի նշանակությունը Հայաստանի բնաշխարհի համար»: Երևանի Մետրոպոլիտենի տնօրենի տեղակալ Գևորգ Ավետիսյանը նշում է, - «Մեզ շատ դուր եկավ նախաձեռնությունը և ուրախությամբ համաձայնվեցինք աջակցել ցուցահանդեսի կազմակերպմանը: Ընդհանուր առմամբ, Երևանի մետրոպոլիտենը խրախուսում է յուրաքանչյուր նախաձեռնություն, որը կրթական և մշակութային նշանակություն ունի»: Ցուցահանդեսում ցուցադրված լուսանկարները ներկայացնում են ընձառյուծի հիմնական ապրելավայրերը, որս հանդիսացող կենդանատեսակները (բեզուարյան այծ, հայկական մուֆլոն, այծյամ և այլն), ինչպես նաև՝ պահպանությանն ուղղված մի շարք միջոցառումներ: Մարտի 3-ը պատահական չէ ընտրված որպես ցուցահանդեսի բացման օր: Այն վայրի բնության համաշխարհային օրն է, որի նպատակն է բարձրաձայնել վտանգված տեսակների պահպանության կարևորությունն ամբողջ աշխարհում: Այս տարի օրվա կարգախոսն է «Լսի՛ր երիտասարդների ձայնը»՝ խրախուսելով մեր մոլորակի ապագա առաջնորդ հանդիսացող և որոշում կայացնող երիտասարդներին պահպանել վտանգված վայրի բնությունը:

Բաց դաս Չարենցավանի թիվ 2 հիմնական դպրոցում



Մարտի 3-ին Կոսայի մարզի Չարենցավանի ֆաղափ թիվ 2 հիմնական դպրոցում անցակվել է բնադասը կարել է ՀՀ բնադասարարության նախարարության աշխատակազմի ֆարսուղարության ղեկ Ն. Ալավերդյանը:

Բաց դասին մասնակցել են 7-րդ դասարանների աշակերտներ, փոխադասարանի, աշխատակազմի, կենսաբանության, բնագիտության ուսուցիչներ: Դասը ընթացում էր կայացվել են մեր հայրենիքի բնության հասուկ դասարանավոր սարածները, դրանց դասարանության ռեժիմի առանձնահատկությունը: Երախտները սեղեկացվել են ամենահին՝ «խոսրովի անտառ» ղեկավար արգելոցը և վերջին սարածների ձևավորված «Արևի լիճ» ազգային դասարան հասուկ դասարանավոր սարածներին մասին: Ներկայացվել է Հայաստանի մայրաքաղաքի արևմտյան զոնայի «Երեբունի արգելոց»-ը: Բանախոսն ընդգծել է, որ մայրաքաղաքում, այն էլ արգելոցի կարգավիճակ ունեցող, հասուկ դասարանավոր սարածի առկայությունը հազվագյուտ երևույթ է: Ն. Ալավերդյանն աշակերտներին մանրամասն ներկայացրել է Հայաստանի Հանրապետության ֆլորայի և ֆաունայի էնդեմիկ տեսակները, ջրային ռեսուրսները, դրանց արդյունավետ կառավարման և օգտագործման խնդիրները, ինչպես նաև՝ բացարձակ, թե ինչ է օգունը և օգունային շերտը: Հանդիպման ավարտին երեխաներին բաժանվել են Օգունային շերտի դասարանության վերաբերյալ նոթատետրեր, դպրոցի գրադարանին նվիրվել են Հայաստանի ԲՀՊՏ-ների մասին դասընթացի բովանդակություն: ՀՀ բնադասարարության նախարարի անունից Չարենցավանի ֆաղափային գրադարանին նվիրվել է «Հայաստանի բույսերի և կենդանիների կարմիր գիրք», որդեսգի ֆաղափի 6-րդ դպրոցի աշակերտները հնարավորություն ունենան օգտվել այդ սահմանադրական ֆունկցիայից՝ հրատարակված արժեքավոր գրքից:

Հայտարարություն



Բնապահպանության նախարարությունը և «Էկո-Մեդիա» ցանցը հայտարարում են լրագրողների համար դասընթացների շարք՝ «Բնապահպանական խնդիրների լուսաբանումը» թեմայով: Դասընթացին մասնակցելու համար ընդունվում են հայտեր: Առաջին սեմինար-դասընթացը տեղի կունենա **մարտի 15-ին ժամը 14:00-ին Երևանում, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում (Հայաստան, 0010, Երևան Պետրոս Ադամյան փող., 14 շենք):** Դասընթացի մասնակիցները կհանդիպեն

պետական, միջազգային եւ հասարակական կառույցների ներկայացուցիչների հետ: Դասընթացի վերջում կորոշվեն հաջորդ հանդիպման օրը եւ վայրը: Բնապահպանական տարբեր թեմաներով դասընթացներից բացի, «Էկո-Մեդիա» ՑԱՆՑԻ անդամները բնապահպան-փորձագետների մասնակցությամբ այս տարվա ընթացքում կմասնակցեն Մեդիա-արշավների՝ այցելելով բնապահպանական թեթև կետեր ու բնության հատուկ պահպանվող տարածքներ: Դասընթացներից հետո լրագրողները կստանան մասնակցության վկայական: Առաջին դասընթացին մասնակցելու համար արդեն իսկ ընդգրկված են «Էկո-Մեդիա» ՑԱՆՑԻ 10 անդամները, ովքեր ստորագրել են Ցանցի հուշագիրը: Հաջորդ 10 մասնակիցներին խնդրում ենք ծանոթանալ դասընթացի մասնակցության դիմում-հայտի ձևին, որը հավելյալ կկցվի: Դասընթացի մասնակցության հայտը անհրաժեշտ է լրացնել և ուղարկել էլեկտրոնային փոստին՝ **gnanyan@gmail.com** հասցեին: Դիմում-հայտերի ընդունման վերջնաժամկետն է **ս.թ. մարտի 12-ը**: Հավելյալ տեղեկությունների համար կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ **+374(93)100090 - Գալուստ Նանյան («Էկո-Մեդիա» ՑԱՆՑԻ համակարգող):**

«Կիրառական բարձր արդյունավետ հեղուկային քրոմատագրաֆիա» առաջին հայալեզու գրքի շնորհանդեսը



«Տոնուս-Լես» ընկերությունում սեղի է ունեցել բարձր արդյունավետ հեղուկային քրոմատագրաֆիային (ԲԱՅԶ) վերաբերող՝ «Կիրառական բարձր արդյունավետ հեղուկային քրոմատագրաֆիա» 1-ին հայալեզու գրքի շնորհանդեսը: Շնորհանդեսին ներկա էին ՀՀ բնադաշտային նախարարի սեղակալ Խաչիկ Հակոբյանը, փմիական գիտությունների դոկտոր Ս. Հայրապետյանը, ակադեմիկոսներ, երիտասարդներ մասնագետներ: Գիրքը ոլորտում առաջին հայալեզու տրամադրաբան է և մեծ կարևորություն ունի այս ոլորտի զարգացման, երիտասարդ մասնագետների վերադաստիարակման, քրոմատագրաֆիական մեթոդի կիրառման հմտություններին սիրադաստիարակման գործում:

Ծում: ԲԱՅԶ-ը ռազմավարական նշանակության զենք է լաբորատորիաների համար: Հանրապետություն մուտք գործող սարքեր նյութերը՝ սնունդը, դեղամիջոցները, կարող են իրենց մեջ դարձնել վստահալի նյութեր և դրանց ժամանակին ի հայտ բերելու համար, արդյունավետ է կիրառել ԲԱՅԶ-ը: Արդյունքում մեր երկիրն առավել դաշտային կլիմա: Իր խոսքում նախարարի սեղակալ Խ. Հակոբյանն ասաց. «Ողջունում եմ գրքի հեղինակին այս աշխատանքի ստեղծման կադրայինը: Շրջակա միջավայրի դաշտային ոլորտում նույնպես իրականացվում են մոնիթորինգային աշխատանքներ և բոլոր մոնիթորինգային ցուցանիշները ձգտվում և դարձվում են լաբորատոր դասարաններում: Բնականաբար, այս սեխնուղղի կիրառվում է նաև բնադաշտային նախարարության ներքին գործող մոնիթորինգի կենտրոնի լաբորատորիայում, սեսչության լաբորատորիայում և այս գիրքը, որն անմիջականորեն օգնելու է լաբորատորային աշխատակիցներին, լաբորանսներին, մասնագետներին՝ առաջնորդելու նույն սեխնուղղիներով, միանշանակ կադրային համադաստիարակման արդյունավետությունը»: Քիմիական գիտությունների դոկտոր Ս. Հայրապետյանը նշել է քրոմատագրաֆիական անալիզի արդյունավետության կարևորությունը, առանց քրոմատագրաֆիայի իրականացման անհանրադարձ լայն կամ այն ուսումնասիրությունը: «Առաջատար ու ամենաարդյունավետ բարձրարդյունավետ հեղուկային քրոմատագրաֆիական մեթոդն է, ինչի մասին էլ հենց այս գիրքն է», - նշել է Ս.Հայրապետյանը:

Հետաքրքիր փաստեր

1859 թ. ավստրիական ֆերմերը Անգլիայից իր սուն բերեց մի ֆանի զույգ ճագարների, որոնցից ստեղծի փոքրիկ բուծարան, բազմացնի նրանց ու զբաղվի որսով: Բնական թեմանիների բացակայությունը և կյանքի իդեալական դայանդները նույնպես ճագարների շուրջ սարին վերահսկողությունը և անվերահսկելի բազմացմանը, ինչն էլ իր հերթին հանգեցրեց մի տարի սեղական բույսերի անհետացմանը: ճագարների դեմ սկսեցին դայարել կրակելով, դայթուցիկներով, թույներով և հասուն մսածված շնույններով, սակայն դրանք բոլորը ադարդյուն դուրս եկան: Վերջապես, 20-րդ դարի կեսերին մասնագետները ճագարների շրջանում սարածեցին միկոսմասոզի վիրուսը, որը նրանց վերահսկողությունը 600 միլիոնից հասցրեց մինչ 100 միլիոնի: Բայց շուտով դարձվեց, որ ողջ մնացած սեսակը ձեռք է բերել զենեխիկական կայունություն և կրկին սկսել է ակտիվորեն բազմանալ:



Նախագիծը՝ Արծրուն Պեղանյանի
Խմբագիր՝ Սանվել Սկրչյան
Ձևավորումը՝ Նարինե Բաղդասարյանի
Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության

Հեռախոս՝
011 818 517